2022, ԴԵԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 24 (620)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Խաղաղության եւ զորակցության աղոթք հանուն Արցախի

Դեկտեմբերի 18-ին Սուրբ Գայանե վանքում հավարտ Սուրբ եւ Անմահ Պատարագի, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց խաղաղության ու զորակցության աղոթք հանուն Արցախի:

Հընթացս արարողության՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը եւ ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք վերառաքեցին առ Աստված Հայաստան ու Արցախ մեր հայրենիքի խաղաղության եւ համայն հայ ժողովրդի անվտանգ ու ապահով կյանքի համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամը հղեց արցախցիներին եւ համայն հայությանը՝ ի մասնավորի ընդգծելով. *«Այս օրերին վերստին վրդովված ու մտահոգ սրտերով ամենքիս հայացքներն ուղղված են դեպի հայոց Արցախ աշխարհը: Արդեն յոթ օր Ադրբեջանի իշխանությունները ակնհայտ սադրիչ գործողություններով եւ կեղծ պատճառաբանություններով փակ են պահում Արցախի՝ Հայաստանի եւ աշխարհի հետ կապի միակ ճանապարհը՝ մատնելով արցախցիներին հումանիտար աղետի: Արգելափակված 120 000 արցախցի մեր քույրեր ու եղբայրներ զրկված են ազատ տեղաշարժի հնարավորությունից, բազմաթիվ հիվանդներ՝ անհրաժեշտ բուժօգնությունից, Արցախի հանրապետությունը՝ կենսական մատակարարումներից»*:

Նորին Սրբությունը, անդրադառնալով ողբերգական այս իրողություններին, նշեց. *«Այսօր Ադրբեջանը վախի ներշնչման միջոցով փորձում է հայաթափել Արցախը: Անհնար է երեւակայել, որ մարդուն եւ նրա արժանապատիվ ու ազատ կյանքը բարձրագույն արժեք հռչակած ներկա աշխարհում հնարավոր է, որ տեղ գտնեն եւ հանդուրժվեն հակամարդկային նմանօրինակ դրսեւորումներ մի ողջ ժողովրդի նկատմամբ»*:

Վեհափառ Հայրապետը նկատելով, որ միայն դատապարտության խոսքերը բավարար չեն զսպելու Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները եւ կասեցնելու վերջինիս թշնամական ընթացքը, ընդգծեց, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակելու է ջանքեր գործադրել, որպեսզի միջազգային հանրությունը, բարեկամ պետությունները, քրիստոնեական քույր եկեղեցիները, միջազգային եւ միջեկեղեցական կազմակերպությունները հնարավոր աջակցություն ու զորակցություն ապահովեն Արցախին եւ Արցախի հայ ժողովրդի զավակներին:

Դիմելով արցախցիներին՝ Հայոց Հայրապետն ասաց. *«Սիրելի՛ արցախցիներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր աղոթքներն ու զորակցությունն ենք բերում ձեզ: Ազատ, անկախ եւ անվտանգ ապրելու ձեր արդար պահանջի մեջ ազգս հայոց միասնական է: Շարունակեք մնալ աննկուն, հավատով ամուր եւ ապրեք ամենօրյա մեծ եւ փոքր հաղթանակների լավատեսությամբ: Արիաբար պիտի դիմակայենք մեզ պատուհասած բոլոր արհավիրքներին, որպեսզի Արցախն ապրի արցախցու ոգով, ծնունդ առնող մանուկների ճիչերով, հայկական հարուստ վկայություններով, պատմական շեներով ու բազմադարյա սրբավայրերով»*:

Նորին Սրբությունը հորդորով դիմեց նաեւ Հայաստանում եւ սփյուռքում ապրող հայորդիներին. *«Արցախի եւ արցախահայության իրավունքների պաշտպանությունը մեր ժողովրդի արժանապատվության հարցն է: Այն արժանապատվության հարցն է յուրաքանչյուր հայի, ուր էլ որ նա ապրի՝ Հայաստանում թե սփյուռքում: Արցախի մեր ժողովուրդը կարիքն ունի ամեն մեկիս ուշադրության եւ աջակցության: Արցախահայության հիմնախնդիրների կարգավորումն անսակարկ առաջնահերթություն է եւ չի կարող փոխարինվել որեւէ այլ մտահոգությամբ: Գիտակցենք, որ Արցախը մեր հայրենիքն է, Հայաստանի ու Արցախի շահերը՝ նույնական, իսկ Արցախի անվտանգությունը անքակտելիորեն կապված է Հայաստանի անվտանգությանը:*

Հայրապետական Մեր պատգամն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ թոթափել անտարբերության ցանկացած դրսեւորում, լինել առավել վճռական ու գործուն՝ միահամուռ ջանքերով ու պատասխանատվությամբ հետամուտ լինելու եւ աջակցելու արցախահայության իրավունքների, Արցախի ազատ ու անկախ կյանքի պաշտպանությանը: Սա ազգային մեր ինքնության պահպանության պայքար է»:

Նորին Սրբությունը մաղթեց, որ Տիրոջ բարեգութ կամքով Հայաստանում եւ Արցախում հաստատվի հարատեւ արժանապատիվ խաղաղություն՝ ի բարօրություն սրբազան մեր հայրենիքի եւ աստվածասեր ժողովրդի:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Դեկտեմբերի 22-ին **«Կրոնները ազգերի խաղաղ համագոյակցության երաշխիք» խորագրով համաժողովի բանախոսներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան կապերի ու մշակույթի կազմակերպության համատեղ նախաձեռնած «Կրոնները ազգերի խաղաղ համագոյակցության երաշխիք» խորագրով համաժողովի բանախոսներին եւ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրիին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը, գոհունակություն հայտնելով համաժողովի կազմակերպման առիթով, ընդգծեց, որ նմանօրինակ համաժողովներն ու միջկրոնական երկխոսություններն իրենց նպաստն են բերում ազգերի միջեւ խաղաղության հաստատման ու ամրապնդման միջավայրի ձեւավորմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերջինիս վառ վկայություն նկատեց երկու հարեւան ժողովուրդների համերաշխ գոյակցության եւ փոխհարաբերությունների բազմադարյա պատմական փորձը:

Հանդիպմանն անդրադառնալով աշխարհում տիրող բարդ իրավիճակին եւ առկա հակամարտություններին՝ Հայոց Հայրապետը հորդորեց ականջալուր լինել խաղաղության կոչին, որն առաջիկա Սուրբ Ծննդյան տոնին հնչելու է քրիստոնեական բոլոր եկեղեցիների խորաններից. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրա խաղաղութո՛ւն եւ հաճութի՛ւն՝ մարդկանց մեջ» (Ղուկ. Բ 14): ➥ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

«Կրոնները ազգերի խաղաղ համագոյակցության երաշխիք» խորագրով համաժողովի բանախոսներին

↩ էջ 1

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ նաեւ արցախյան հակամարտությանը՝ տեղեկացնելով, որ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդները եւս ջանքեր են ներդնում հակամարտության հանգուցալուծման եւ ազգերի միջեւ խաղաղության հաստատման գործում:

Իր հերթին դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրին վստահություն հայտնեց, որ միջկրոնական երկխոսությունը կարող է ամուր կամուրջ լինել տարբեր ոլորտներում ազգերի փոխգործակցային հարաբերությունների զարգացման համար:

Վերջում Նորին Սրբությունը, իր գնահատանքը բերելով համաժողովի բանախոսներին, բարի եւ արդյունավոր ընթացք մաղթեց նրանց:

Դեկտեմբերի 25-ին **Արցախի պատվիրակությանը**

Ս. Գայանե վանքում, հավարտ Սուրբ եւ Անմահ Պատարագի, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց խաղաղության ու զորակցության աղոթք հանուն Արցախի:

Արարողությանը ներկա էին ԱՀ պետնախարարի խորհրդական Արտակ Բեգլարյանի գլխավորած պատվիրակության անդամները, որոնք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության հետ միասին աղոթք վերառաքեցին առ Աստված Հայաստանի եւ Արցախի խաղաղության ու համայն հայ ժողովրդի անվտանգ եւ ապահով կյանքի համար:

Հավարտ արարողության՝ Արցախի պատվիրակությանն ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիպմանը պատվիրակության անդամները Հայոց Հայրապետին մանրամասներ ներկայացրին Արցախում՝ մասնավորապես Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով ստեղծված իրավիճակի առնչությամբ, ինչը հանգեցրել է արցախցիների կենսական իրավունքների ոտնահարմանն ու արցախահայությանը կանգնեցրել հումանիտար աղետի առջեւ:

Դատապարտելով Ադրբեջանի իշխանությունների սադրանքը՝ զրուցակիցները քննարկեցին իրավիճակի հաղթահարմանն ուղղված քայլերը: Այս առնչությամբ կարեւորելով համազգային ներուժի եւ ջանքերի մեկտեղումն ի զորակցություն Արցախի ժողովրդի՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայ Եկեղեցին շարունակելու է ջանքեր գործադրել հնարավոր աջակցություն ու զորակցություն ապահովելու Արցախին եւ արցախահայությանը:

Հայոց Հայրապետը տեղեկացրեց նաեւ, որ բոլոր եկեղեցիներում, հընթացս կիրակնօրյա Սուրբ Պատարագի, կկատարվի խաղաղության աղոթք հանուն Արցախի:

Դեկտեմբերի 26-ին **Քառասնօրյա պատրաստության շրջանն անցած քահանաներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սույն թվականի նոյեմբերի 13-ին Մասյացոտնի թեմի առաջնորդանիստ Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցում քահանայական կոչմանն արժանացած եւ Մայր Աթոռում քառասնօրյա պատրաստության շրջանն անցած նորաօծ քահանաներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բերեց քահանա հայրերին հովվական ծառայության կոչվելու առիթով եւ նրանց մաղթեց Աստծու զորակցությունն ու առաջնորդությունը՝ ընդգծելով, որ հոգեւոր սպասավորությունը պետք է ուղեկցվի անձնազոհ եւ հանձնառու ոգով, սեփական կոչմանն ու առաքելությանը հավատարիմ լինելու բարձր գիտակցությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը քահանա հայրերին պատգամեց, որ այս դժվարին ժամակաշրջանում, առավել քան երբեւէ, կարեւոր է եկեղեցականի անձնազոհ ծառայությունը՝ հավատ եւ հույս ներշնչելու հայորդիներին, ամրացնելու նրանց լավատեսության ոգին, սերմանելու հայրենիքի, ազգային ու հոգեւոր արժեքների նկատմամբ անսակարկ սեր եւ նվիրում:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունն օրհնեց քահանաներին՝ նրանց ընծայելով ձեռաց խաչեր եւ Սուրբ Հաղորդության մասնատուփեր:

Մայր Աթոռի սարկավագաց դասին

Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռում սպասավորող, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ նորընծա սարկավագներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Շահե ծ. վրդ. Անանյանի:

Տերունական աղոթքից հետո լուսարարապետ սրբազան հայրը, սարկավագաց դասի անունից շնորհավորելով Նորին Սրբությանը Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնի կապակցությամբ, հայցեց Հայոց Հայրապետի օրհնությունը:

Իր հերթին հայր Շահեն վստահություն հայտնեց, որ նորընծա սարկավագները, ուսումնառությունն ավարտելով, իրենց գիտելիքներն ու կարողություններն ի սպաս կդնեն հանուն Եկեղեցու եւ հայ ժողովրդի:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով եւ իր հայրական օրհնությունը փոխանցելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Հայաստանի եւ սփյուռքի տարբեր թեմերում սպասավորող սարկավագներին օրվա խորհրդի առիթով, անդրադարձավ Սուրբ Ստեփանոսի՝ Եկեղեցու առաջին նահատակի անձին ու կերպարին: Նորին Սրբությունը Հայ Եկեղեցու նվիրապետական դասի կրտսեր սպասավորներին հորդորեց, որ Սուրբ Ստեփանոսի նվիրումը, հավատքը, աստվածասիրությունն ու արիական ոգին օրինակ ունենալով՝ իրենց ծառայությունը բերեն Քրիստոսի Եկեղեցուն եւ հայրենիքին: Հայոց Հայրապետը պատգամեց նաեւ նմանվել իրենց եկեղեցական այն եղբայրներին, որոնք նվիրումով ու քաջությամբ, իրենց կյանքը չխնայելով՝ Նախասարկավագի անձնազոհության բարձր գիտակցումով առաջնագծում կանգնած են եղել հայ զինվորի կողքին, գոտեպնդել ու քաջալերել են:

Վեհափառ Հայրապետը նկատեց, որ այսօր առավել, քան երբեւէ, յուրաքանչյուր հայորդուց պահանջվում են Սուրբ Ստեփանոսի նվիրումն ու նահատակության հանձնառության գիտակցումը, որոնցով հնարավոր կլինի հաղթահարել առկա մարտահրավերներն ու հաղթանակած դուրս գալ ստեղծված դժվարին իրավիճակից, ինչպես քրիստոնեությունը հաղթանակեց նահատակների ու մարտիրոսների շնորհիվ:

Վերջում Նորին Սրբությունը սարկավագներին պատգամեց, որ իրենց առաքինի ընթացքով ու նվիրյալ ծառայությամբ պանծացնեն Հայ Եկեղեցու եւ եկեղեցականի բարի համբավը՝ արժանանալով գալիք սերունդների օրհնությանը:

Հանդիպումը եզրափակվեց սարկավագաց դասի «Ստեփանոս, քաղցրիկ տատրակ» տաղի երգեցողությամբ եւ Նորին Սրբության Պահպանիչ աղոթքով:

Կանադայում բուժումն ավարտած սերժանտ Արթուր Հովհաննիսյանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց արցախյան 44-օրա պատերազմում հաշմանդամություն ստացած սերժանտ Արթուր Հովհաննիսյանին, որը Կանադայի հայոց թեմի եւ Արագածոտնի թեմի նախաձեռնությամբ ու աջակցությամբ մեկնել էր Կանադա՝ անհրաժեշտ բուժման եւ վերջույթների պրոթեզավորման համար:

Հանդիպմանը ներկա էր Արագածոտնի թեմական խորհրդի ատենապետ Գրիգոր Մովսիսյանը:

Տիար Մովսիսյանը Վեհափառ Հայրապետին տեղեկացրեց Արթուր Հովհաննիսյանի բուժման ու պրոթեզավորման բարեհաջող ընթացքի մասին՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը հայրական խնամքի եւ հոգածության համար:

Ամենայն Հայրոց Հայրապետը, իր օրհնությունը բերելով հայրենյաց պաշտպանին, գոհունակությամբ արձանագրեց, որ վերջինս, ստանալով անհրաժեշտ խնամքն ու բուժումը, կկարողանա լիարժեքորեն վերադառնալ կյանքի բնականոն ընթացքին եւ իր նվիրյալ ծառայությունը բերել հայրենիքին:

Հանդիպմանն Արթուր Հովհաննիսյանն իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը եւ թեմական առաջնորդներին իր բուժումն ու ապաքինումը Կանադայում կազմակերպելու եւ հոգատար վերաբերմունքի համար:

«Կրոնները ազգերի խաղաղ համագոյակցության երաշխիք» խորագրով համաժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան կապերի եւ մշակույթի կազմակերպության համատեղ գիտաժողովը՝ «Կրոնները ազգերի խաղաղ համագոյակցության երաշխիք» խորագրով:

Համաժողովը բացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի եւ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրիի ողջույնի խոսքերով:

Նաթան արքեպիսկոպոսն իր ողջույնի խոսքում ներկաներին փոխանցեց նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գնահատանքն ու բարեմաղթանքները:

Այնուհետեւ օրվա թեմայի շուրջ բանախոսեցին Երեւանի պետական համալսարանի կրոնագիտության ամբիոնի վարիչ փիլիսոփայական գիտ. թեկնածու Պարգեւ Բարսեղյանը («Հայերը Իրանի հասարակական եւ մշակութային կյանքում (20–21-րդ դարեր), Իրանի կանանց եւ ընտանիքի մասին հետազոտությունների կենտրոնի գիտական կազմի եւ կանանց կրոնագիտական դպրոցի քաղաքական խորհրդի ու կանանց սոցիալ-մշակութային խորհրդի անդամ փիլիսոփայական գիտ. դոկտոր տիկին Ֆարիբա Ալասվանդը («Կանանց դերը տարբեր կրոնների հետեւորդների միջեւ խաղաղ համակեցության զարգացման գործում»), ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ Վարդան Ոսկանյանը («Իրանական ծագման քրիստոնեական եզրույթների որոշ նմուշներ հայերենում») եւ դոկտոր տիկին Էնսիյե Ղանազադեհը («Կրոնների խաղաղ գոյակցություն Իրանում»):

Գիտաժողովի երկրորդ նիստին զեկույցներով հանդես եկան դոկտոր Սեյյեդ Մոնզեր Հաքիմը («Հավատացյալների սոցիալական պատասխանատվությունն այլ կրոնների հետեւորդների նկատմամբ»), ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի դասախոս Վարուժան Գեղամյանը («Հայ Առաքելական Եկեղեցու դերը մերձավորարեւելյան սոցիալ-մշակութային եւ քաղաքական ժամանակակից համակարգերում»), դոկտոր Զավադ Զաֆարին («Կրոնական երկխոսության կարեւորությունը տարբեր կրոնների հետեւորդների միջեւ խաղաղ համակեցության ամրապնդման համար») եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ու Սեւանի Վազգենյան դպրանոցի տեսուչ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Շահե ծ. վրդ. Անանյանը («Կրոնական երկխոսությունը որպես հակամարտությունների հաղթահարման միջոց»):

Վերջում ներկայացված զեկույցներն ամփոփվեցին, եւ ընդունվեց հայտարարության բնագիրը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կրոնները ազգերի խաղաղ համագոյակցության երաշխիք» խորագրով համաժողովի մասնակիցների

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 22 դեկտեմբեր, 2022 թ.)

Մենք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան համատեղ կազմակերպած «Կրոնները ազգերի խաղաղ համագոյակցության երաշխիք» խորագրով համաժողովի մասնակից հայ քրիստոնյաներս եւ իրանցի մուսուլմաններս՝ որպես համաշխարհային եւ ավանդական կրոնների ներկայացուցիչներ, առաջնորդվելով հանուն կայուն, անվտանգ խաղաղության անհրաժեշտությամբ եւ հաստատելով ընդհանուր մարդասիրական արժեքների կարեւորությունը մարդկության հոգեւոր եւ ընկերային կյանքի զարգացման, համընդհանուր խաղաղության, անվտանգության եւ կայունության ապահովման գործում՝

Հայտարարում ենք

- *Ճանաչել ազգային-կրոնական եւ հոգեւոր-բարոյական ուղենիշների առանցքային նշանակությունը եւ կարեւորությունը հասարակական հարաբերությունների կայուն զարգացման գործում:*
- *Դատապարտել եւ մերժել ընկերային, էթնոմշակութային եւ կրոնական տարբերությունների հիմամբ անհանդուրժողականությունը, այլատյացությունը, խտրականության դրսեւորումները եւ հակամարտությունները:*
- *Կարեւորել ժողովուրդների կրոնական բազմազանությունը՝ որպես համամարդկային ժառանգության պահպանման գործոն:*
- *Խրախուսել բարեգործությունը, կարեկցանքը, ողորմությունը, ընկերային արդարության եւ համերաշխության կատարելատիպերի ձեւավորումը՝ նպաստելով հասարակությունների մերձեցմանը:*
- *Ընդունել կրթության եւ մասնավորապես կրոնական կրթության արժեքն անձի ինքնակրթության, ինչպես նաեւ այլ կրոնների ու մշակույթների նկատմամբ հարգալից վերաբերմունքի զարգացման գործում:*
- *Ընդգծել հասարակության մեջ եւ ընտանիքի պահպանման ու ամրապնդման գործում կնոջ դերը, հատկապես մոր կարեւորությունը մատաղ սերնդի դաստիարակության հարցում:*
- *Ամերկբա դատապարտել ծայրահեղականությունը, արմատականությունն ու ահաբեկչությունը, հատկապես կրոնական հողի վրա, որոնք ոտնձգություն են մարդկային կյանքի ու արժանապատվության, խաղաղության ու անվտանգության նկատմամբ:*
- *Դատապարտել աշխարհում եւ հատկապես մեր տարածաշրջանում հակամարտությունների եւ լարվածության օջախների ստեղծմանը նպաստող որեւէ գործողություն եւ խոսք:*
- *Խստիվ դատապարտել կրոնական դրույթների եւ գաղափարների կեղծումը եւ միտումնավոր շահարկումն ազգերի եւ ժողովուրդների միջեւ հակամարտություն եւ լարվածություն հրահրելու նպատակով:*

Նոր տարվա եւ Սուրբ Ծննդյան շեմին Սուրբ Էջմիածնից աղոթում ենք առ Բարձրյալը՝ հայցելով խաղաղություն համայն աշխարհին եւ համերաշխություն բոլոր ժողովուրդների միջեւ:

«ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան՝ 25 տարի համայնքների կողքին» խորագրով միջոցառում

Դեկտեմբերի 14-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ «ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան՝ 25 տարի համայնքների կողքին» խորագրով միջոցառում՝ նվիրված ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի 25-ամյակին:

Միջոցառմանը ներկա էին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական առաջնորդներ, ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի հոգաբարձուներ, գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի լուսարարապետ, Կլոր սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը:

Այնուհետեւ իր օրհնությունն ու պատգամը ներկաներին բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ընդգծելով, որ հոբելյանները հաստատությունների կյանքում առիթ են անցած ուղին քննելու եւ արժեւորելու, ապա նաեւ առկա մարտահրավերների հանդիման՝ առաքելությունը վերահիմաստավորելու եւ արդյունավորելու: Նորին Սրբությունը նկատեց, որ տարիների ընթացքում համագործակցելով եկեղեցական, պետական կառույցների եւ հասարակական կազմակերպությունների հետ՝ Կլոր սեղանը բազմաթիվ հանրօգուտ ծրագրեր է իրականացրել կրթական, սոցիալական ոլորտներում, արձագանքել հայրենի կյանքում հրատապ լուծում պահանջող խնդիրներին:

Նորին Սրբությունը մասնավորապես նշեց. *«Աշխարհաքաղաքական իրողությունները, Մերձավոր Արեւելքում տիրող կացությունը, ապա արցախյան հակամարտությունը պատճառ դարձան, որ հիմնադրամն իր ծառայության առաջնահերթ ոլորտ սկսի դիտարկել նաեւ արտակարգ իրավիճակները: Այս շրջանակում Կլոր սեղանը գնահատելի ծրագրեր է իրականացրել սիրիահայ ներգաղթյալների խնամքի եւ աշխատանքի ապահովման, համավարակի շրջանում կարիքավորներին անհրաժեշտ պարենի մատակարարման, 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի ժողովրդին աջակցության տրամադրման ուղղությամբ: Առ այսօր Կլոր սեղանը շարունակում է մասնակցություն բերել պատերազմի հետեւանքների վերացման աշխատանքներին»:*



Հայոց Հայրապետը նաեւ գոհունակությամբ ընդգծեց, որ Կլոր սեղանը հիմնադրման առաջին իսկ օրերից մասնագիտական հմտություններով ու կարողություններով նշանակալի ներդրում է ունեցել կրթական եւ սոցիալական ոլորտներում եկեղեցու առաքելության արդյունավորման գործում, ու վստահություն հայտնեց, որ հիմնադրամը, մշտապես հաղորդ լինելով երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին եւ առկա կարիքներին, պիտի շարունակի իր տեսլականին համահունչ բազմաբնույթ ծրագրերի իրագործմամբ բարեբեր ծառայություն մատուցել հայ ժողովրդին:

«Անուրանալի է, որ պատկառելի ճանապարհ է անցել հիմնադրամը, արձանագրել կարեւոր ձեռքբերումներ, սակայն, ցավոք, կարիքները մեր շուրջ բազում են, մարտահրավերները՝ օրըստօրե ահագնացող: Ուստի դեռ շատ անելիքներ կան՝ ի սեր մեր ժողովրդի: Վստահ ենք, որ Կլոր սեղան հիմնադրամը հատկապես այսօր, երբ Ադրբեջանի իշխանությունները, փակելով Լաչինի միջանցքը, հերթական վայրագությունն են իրականացնում արցախահայության նկատմամբ, իր ձայնը պետք է բարձրացնի միջեկեղեցական, բարեսիրական կազմակերպությունների առջեւ՝ ի խնդիր արցախահայ մեր քույրերի ու եղբայրների անկախ, ապահով ու անվտանգ կյանքի իրավունքի պաշտպանության»,— նշեց Վեհափառ Հայրապետը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց առ Աստված, որ ամենողորմ Տերը խաղաղություն եւ ապահովություն շնորհի մեր հայրենիքին՝ Հայաստանին եւ Արցախին, բարօր ու անվտանգ կյանք՝ փորձությունների միջով անցնող մեր ժողովրդին՝ բարի առաքելության նոր տասնամյակներ մաղթելով Կլոր սեղան հիմնադրամին:

Այնուհետեւ իր խոսքը ներկաներին փոխանցեց ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղանի գործադիր տնօրեն պարոն Կարեն Նազարյանը: Վերջինս, անդրադառնալով հիմնադրամի ստեղծման պատմությանը եւ 25-ամյա սոցիալական-հոգեբանական, դիակոնիկ գործունեությանն ու զարգացման ծրագրերին, իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին այս տարիների ընթացքում ցուցաբերած հայրական խնամքի եւ զորակցության համար:

Սարկավագական ձեռնադրություն

Դեկտեմբերի 26-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Ստեփանոս Նախավկայի հիշատակության օրը, որը նաեւ Եկեղեցու անդաստանում ծառայող սարկավագների տոնն է:

Տոնի առիթով Սեւանավանքի Սուրբ Առաքելոց եկեղեցում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս. Տիգրանյանի ձեռամբ սարկավագական ձեռնադրության արժանացավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ե լսարանի երեք սան:

Նախորդ օրը՝ դեկտեմբերի 25-ի երեկոյան, տեղի էր ունեցել դպրության, ուրարակրության եւ կիսասարկավագության աստիճանների տվչության արարողությունը: Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Վազգենյան հոգեւոր դպրանոցի Բ լսարանի 12, Դ լսարանի 12 եւ Ե լսարանի 3 սան ստացել էր դպրության, ուրարակրության եւ կիսասարկավագության աստիճան:

Արտակ սրբազանը, ձեռնադրության սուրբ խորհրդից հետո նորընծա սարկավագներին եւ ներկաներին փոխանցելով օրվա պատգամը, Սուրբ Ստեփանոսի մասունքակիր աջով օրհնեց վերջիններիս:

Սուրբ Պատարագի ավարտին եկեղեցականները եւ ներկա բարեպաշտ ժողովուրդը նաեւ հնարավորություն ունեցան խոնարհվելու եւ հաղորդվելու Սուրբ Ստեփանոսի՝ տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Սեւանավանք բերված մասունքին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներբողը եւ դրա մեկնությունները

Սկիզբը՝ թիվ 22–23

Մաս Դ.

Խաչը հայ աստվածաբանական մատենագրության մեջ. «Բարձրացուցէք»-ի ազդեցությունը Խաչի՝ ԺԷ–ԺԹ դդ. ստեղծված ներբողների եւ շարականների վրա

Վին աշխարհում չարչարանքի եւ մահվան գործիք համարվող Խաչը քրիստոնյաների համար դառնում է փրկության, մեղքի ու մահվան հանդեպ հաղթանակի խորհրդանիշ: Խաչի խորհրդաբանությունը քրիստոնեական աստվածաբանության կարեւոր բաղկացուցիչներից է: Հայ Եկեղեցու վարդապետության մեջ Խաչի աստվածաբանությունն ունի առանձնահատուկ տեղ՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով.

ա. Խաչը կարեւոր դեր ունի Հայ Եկեղեցու դավանաբանական, ծիսապաշտամունքային համակարգերում, ինչպես նաեւ ժողովրդի կյանքում: Պատահական չէ, որ հայերին անվանել են «խաչապաշտ», անգամ մեղադրել Խաչը չափից ավելի պաշտելու մեջ: Ասվածի վառ վկայությունն է Մխիթար Գոշի «Թուղթ առ վրացիսն յաղագս ուղղափառութեան հաւատոյ» երկը, որում խոսելով տարբեր ազգերին բնորոշ սովորույթների մասին՝ հեղինակը գրում է. «Յոյնք եւ վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն, եւ հայք՝ զխաչն»:

բ. Հայաստանում տարածված աղանդները (նեստորական, պավլիկյան, թոնդրակյան եւ այլն) հիմնականում մերժել են Խաչի զորությունը: Ուստի՝ Խաչի խորհրդի մեկնությունն անհրաժեշտ է եղել նաեւ աղանդների դեմ գաղափարական պայքարի տեսանկյունից:

գ. Պատմության ընթացքում անընդհատ ենթարկվելով այլակրոն ազգերի ասպատակություններին՝ անհրաժեշտ է եղել հայ ժողովրդի գիտակցության մեջ մշտապես վառ պահել քրիստոնեության հիմնական խորհրդանիշ Խաչի նշանակությունը: Սա արտահայտվել է ոչ միայն դավանաբանական գրականության մեջ, այլ նաեւ տոնածիսական համակարգում եւ քրիստոնեական խորհրդաբանության վրա հիմնված միջնադարյան արվեստում (հատկանշական են Հայաստանում այդքան տարածված խաչքարերը):

Գիտենք, որ Հայ Եկեղեցին ունի Խաչին նվիրված չորս՝ Գյուտ Խաչի, Երեւումն Սուրբ Խաչի, Վերացումն Սուրբ Խաչի կամ Խաչվերաց, նաեւ ծագումով զուտ հայկական Վարագա Սուրբ Խաչի տոները: Առաջին երեքը տոնախմբում են նաեւ Կաթոլիկ եւ Ուղղափառ Եկեղեցիները, սակայն Հայ Եկեղեցու ավանդության մեջ դրանք ունեն որոշակի առանձնահատկություններ: Խաչի պաշտամունքի մասին խոսելիս կարեւոր է նշել նաեւ Հայաստանի տարածքում գտնվող խաչերի, խաչափայտի մասունքների եւ դրանց հետ կապված բազմաթիվ ավանդությունների ու հրաշապատումների, ինչպես նաեւ Ս. Նշան անունով սրբատեղիների, վանքերի ու եկեղեցիների մասին:

Հայ Եկեղեցու՝ տարբեր ժամանակներում ապրած վարդապետներն իրենց ստեղծագործություններում կամ դավանաբանական տարբեր հարցերին առնչվող երկերում անդրադարձել են Խաչին:

Դավիթ Անհաղթի «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ»-ը, լինելով հայ մատենագրության մեջ Խաչին նվիրված հնագույն ստեղծագործությունը, մեծ ազդեցություն է ունեցել աստվածաբանական մտքի վրա: Հայ մեկնիչները, շարականագիրները, ճառերի եւ ներբողների հեղինակներն օգտվել են «Բարձրացուցէք»-ից՝ թե՛ աստվածաբանական եւ փիլիսոփայական, թե՛ զուտ բառային եւ լեզվական առումներով:

Պետք է նշել, որ առհասարակ Խաչին նվիրված ստեղծագործությունների հիմքում ընկած են հետեւյալ հիմնական թեմաները՝ Խաչի հինկտակարանային նախօրինակներ (կենաց, գիտության ծառ, Մովսես մարգարեի գավազան, Նոյի տապան, Հակոբի՝ երազում տեսած սանդուղք, Սաբեկի ծառ եւ այլն), Խաչի բարոյաբանական նշանակությունը շեշտող որակումներ, Խաչի աստվածաբանությանն ու փրկագործության վարդապետությանն առնչվող բացատրություններ, Սուրբ Խաչի փառաբանություն: Տարբեր հեղինակների ստեղծագործություններում կամ երկերում բովանդակային առումով համընկնող պատկերները, այնուամենայնիվ, միանգամայն տարբերվում են մատուցման եղանակով (լեզու, գեղարվեստական ոճ, պատկերների հաջորդականություն եւ այլն):

Խաչի աստվածաբանության ծաղկումն սկսվում է Է դարից՝ Քրիստոսի խաչափայտի գերեդարձից հետո: Հավանաբար այդ առիթով է Խաչին նվիրված իր ներբողը գրել է դարի հեղինակ Թեոդորոս Քռթենավորը: Նա Կոմիտաս Ա Աղցեցու (615–628 թթ.) եղբորորդին էր եւ Եզր կաթողիկոսի (630–641 թթ.) քեռորդին, իսկ Սյունյաց վարդապետարանում նրա ուսուցիչը եղել է Մաթուսաղա փիլիսոփան: Դավիթ Անհաղթի հետեւողությամբ Թեոդորոս Քռթենավորը եւս սկզբում բոլորին հորդորում է «ուղղափառ հաւատով» երկրպագել Սուրբ Խաչը: Նա հաճախ Խաչն անվանում է «անբարբառ բարեխաւս». բնորոշում, որը նույնպես առաջինը հանդիպում է Դավիթ Անհաղթի երկում: Ընդհանուր առմամբ «Բարձրացուցէք»-ից են վերցված նաեւ Խաչին տրվող՝ «ամպատեսիլ սիւն», «իմանալի գաւազան», «իմանալի սեղան», «իմանալի սանդուղք» որակումները: Բերված օրինակներից ակնհայտ երեւում է «Բարձրացուցէք»-ի ազդեցությունը Թեոդորոս Քռթենավորի ներբողի վրա, սակայն վերջինս աչքի է ընկնում միանգամայն նոր, հետաքրքիր եւ աստվածաբանական խոր գաղափարներով ու ձեւակերպումներով:

Թ դարում Խաչին նվիրված ներբողներ են գրել Արցախ նահանգում ապրած Միսայել եպիսկոպոսը եւ Զաքարիա Ա Զագեցի (855–876 թթ.) հայրապետը: Նրանց ներբողները թեեւ լեզվական, կառուցվածքային եւ աստվածաբանական առումով առավել պարզ ստեղծագործություններ են, սակայն առաջին իսկ հայացքից նկատելի է «Բարձրացուցէք»-ի ազդեցությունը:

Միսայել եպիսկոպոսը, Դավիթ Անհաղթի օրինակով, իր ներբողի սկզբում Խաչը համեմատում է Սիոն լեռան՝ որպես Աստծու ոտքերի պատվանդանի հետ. «Բարձրացուցէք»-ի արձագանքը երեւում է հատկապես Խաչի բանաստեղծաշունչ որակումների հատվածներում: Բացի այդ՝ Միսայել եպիսկոպոսը Դավիթ Անհաղթից փոխառել է աստվածաբանական-փիլիսոփայական որոշ մտքեր, օրինակ՝ հոգեւոր եւ նյութական մակարդակներում Խաչի իմաստային երկփեղկման գաղափարը: Խաչի խորհրդի բացատրության մեջ Դավիթ Անհաղթի գործածած *«ձեւական»*-ի եւ *«իմացական»*-ի փոխարեն Միսայել եպիսկոպոսը կիրառում է *«զգայական»* ու *«խորհրդական»* բառերը:

Զաքարիա Ա Զագեցու ներբողը գեղարվեստական առումով առավել գեղեցիկ եւ բանաստեղծական է: Դրանում եւս, բացի Խաչի ներբողներին բնորոշ վերոնշյալ ընդհանրություններից, նկատվում է «Բարձրացուցէք»-ում առկա նորպլատոնական որոշ

գաղափարների արձագանքը: Բովանդակությունից զատ՝ մեկ այլ՝ կառուցվածքային օրինաչափություն է նկատվում Դավիթ Անհաղթի, Թեոդորոս Քռթենավորի եւ Զաքարիա Ա Զագեցու նշյալ ստեղծագործություններում: Դրանք՝ բոլորը, բաղկացած են երկու հիմնական մասից: Առավել ազատ ոճով շարադրված առաջին մասում հեղինակները տալիս են աստվածաբանական, փիլիսոփայական խոր ձեւակերպումներ, իսկ բանաստեղծական որոշակի ռիթմ ունեցող երկրորդ հատվածում, որի յուրաքանչյուր պարբերություն սկսվում է միեւնույն բառով, փառաբանությանը զուգահեռ ներկայացվում են հիմնականում Խաչի նախապատկեր համարվող հինկտակարանային դրվագները: Նշենք, որ Դավիթ Անհաղթի «Բարձրացուցէք»-ում գոհաբանական մասի 30 պարբերությունից 26-ն սկսվում են «Օրհնեա՛լ ես» արտահայտությամբ (4 պարբերության սկսվածքն է՝ «Ո՛վ հրաշիցս»), որին հաջորդում են «աստուածազարդ քրիստոսապսակեալ փայտ սուրբ» կամ պարզապես «փայտ սուրբ» բառերը: Թեոդորոս Քռթենավորի ներբողի երկրորդ մասի պարբերություններն սկսվում են «Ո՛վ ճշմարիտ» կամ «Ո՛վ սքանչելի» բառերով: Զաքարիա Ա Զագեցու հեղինակած ներբողն աչքի է ընկնում իր բանաստեղծական բնույթով, սակայն ստեղծագործության մի կեսը բաղկացած է «Բարեբանեա՛լ ես» բառով ու դրան հաջորդող «ամենաւրհնեալ փայտ սուրբ», «փրկագործ եւ աշխարհակեցոյց փայտ սուրբ» եւ այլ արտահայտություններով սկսվող հատվածներով:

Ս. Գրիգոր Նարեկացու (947–1003 թթ.)՝ Խաչին նվիրված ներբողը, որ հայտնի է երկու տարբերակով, իմաստային եւ գեղարվեստական առումով ավելի ինքնօրինակ է: ➥ էջ 8

Սուրբ Ստեփանոս Նախավկա

Ս. Ստեփանոս Նախավկան Ա դարում առաքյալների ընտրած յոթ սարկավագներից՝ Եկեղեցու առաջին սպասավորներից մեկն էր: Ինչպես Քրիստոսի համար նահատակված Նախասարկավագի մասին վկայում են վարքագրական աղբյուրները, Ս. Ստեփանոսը Հուդայի թագավորական զարմից եւ օրինապահ ծնողների զավակ էր: Ժամանակակից էր Քրիստոսին. Փրկչի խաչելության ժամանակ Նախասարկավագը դեռեւս պատանի էր եւ սպասավորում էր Կայիափա քահանայապետին: Երբ երեսպաշտ հրեաները Քրիստոսին ձերբակալում եւ տանում են Կայիափա քահանայապետի տուն, Ստեփանոսն իր գլխի վարշամակը փռում է Տիրոջ ոտքերի տակ՝ աներկյուղ ցույց տալով Փրկչի հանդեպ իր վերաբերմունքը: Այս արարքից հետո քահանայապետը Ստեփանոսին վռնդում է իր տանից. պատանին դառնում է Քրիստոսի հետեւորդն ու առաքյալների գործակիցը: Ըստ եռամեծար վարդապետ Ս. Գրիգոր Տաթեւացու՝ Ս. Ստեփանոսին մկրտել են Պետրոս եւ Հովհաննես առաքյալները: Համաձայն ավանդության՝ Նախասարկավագի մկրտության պահին ջրի վրա երեւացող լուսապսակը գալիս հանգչում է սրբի վրա, ինչի համար եւ սրբին անվանում են Ստեփանոս, որը հունարենից թարգմանաբար նշանակում է պսակ:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ այս տարի Ս. Ստեփանոս Նախասարկավագի տոնը նշում է դեկտեմբերի 26-ին, Ավագ տոների հետ կատարվող ամենամյա այդ հիշատակումով մշտապես պանծացնում է մարտիրոսի անձն ու գործը՝ դարձյալ անդրադառնալով այն առաքելությանը, որն ստանձնել եւ լավագույնս իրագործել է Քրիստոսի սուրբ վկան: Սրբազան ավանդության համաձայն՝ Ստեփանոսն իր առաքինություններով եւ բարեպաշտությամբ արժանացել էր աղքատներին, այրիներին ու որբերին խնամելու շնորհին: Եվ իրապես, Ընդհանրական Եկեղեցում չկային առավել մեծ ու ճշմարիտ շնորհներ, քան որբերի, այրիների եւ ծերերի խնամատարությունը, կարիքավորների մասին հոգ տանելը: Նախասարկավագն իր առաքելությունն իրագործում էր ճիշտ այնպես, ինչպես առաքյալներն էին պատվիրել իրեն: Առաքյալները հենց Ստեփանոսին են ընտրում եւ նրան են վստահում այդ դժվարին եւ խիստ պատասխանատու գործառույթը, քանի որ, ինչպես ասվում է Աստվածաշնչում, Նախասարկավագը հավատով եւ Սուրբ Հոգով լցված մի մարդ էր. ահա՛ սրբի առավելությունը: Նա խոնարհաբար էր ծանր լուծը վերցնում եւ պատրաստակամությամբ էր կատարում առաքյալների կարգադրությունները: Չէ՞ որ հավատը բարի գործերով է զորանում եւ արգասաբերում... Ինքը՝ Փրկիչը, ասում է. «....մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու եւ իր անձը տալու որպես փրկանք շատերի փոխարեն» (Մատթ. Ի 28):

Ս. Ստեփանոսին կարող ենք «Սուրբ Երրորդության բնակարան» անվանել, քանզի իրապես էր կրում Սուրբ Հոգին, իսկ որտեղ Սուրբ Հոգին է, այնտեղ են նաեւ Որդին ու Հայրը:

Տերն ասում է. «Եթե մեկը սիրում է ինձ, իմ խոսքը կպահի, եւ իմ Հայրը նրան կսիրի. եւ մենք Նրա մոտ կգանք եւ Նրա մոտ կօթեւանենք» (Հովհ. ԺԴ 23): Արդարեւ, Ստեփանոսը սիրեց Տիրոջն ու առանց որեւէ գայթակղության ենթարկվելու՝ պահեց Նրա խոսքերը: Երանելի սուրբը ոչ միայն հոգ էր տանում կարիքավորների, որբերի, այրիների ու ծերերի մասին, այլ նաեւ աներկյուղ քարոզում էր Աստծու խոսքը եւ հրաշքներ էր գործում: Նրա համբավը հետզհետե տարածվում է. չարությամբ եւ նախանձով լցված հրեաները, քահանաներն ու օրենսգետները նենգաբար ամբաստանում են Ս. Ստեփանոսին եւ նրան հանձնում հրեաների բարձրագույն ատյանին: Կեղծ վկաներն ասում են. «Այս մարդը չի դադարում հայհոյական խոսքեր ասել այս սուրբ տեղի եւ օրենքի դեմ....» (Գործք Զ 13): Ատյանում բոլոր մեղադրանքներին ի պատասխան՝ Նախասարկավագը անսասան հավատով եւ աստվածատուր իմաստությամբ մեկնում է Հին Կտակարանը, անդրադառնում Քրիստոսի վերաբերյալ մարգարեական կանխասացություններին եւ հիմնավորում է, որ բոլոր մարգարեությունները լրումին հասան եւ իրականացան Աստծու Որդու՝ ճշմարիտ Փրկչի միջոցով (տե՛ս Գործք Է 1–53): «Գործք առաքելոց»-ը վկայում է, որ Ս. Ստեփանոսն իր խոսքն ավարտում է հրեաներին ուղղված արդարացի մեղադրանքով՝ նրանց անվանելով Տիրոջ մատնիչներ եւ սպանողներ: Ս. Ստեփանոսի խոսքերից գազազած ժողովականները հարձակվում են նրա վրա, քաղաքից դուրս տանում եւ իրենց զգեստները դնելով Սավուղ անունով մի երիտասարդի (նույն Պողոս առաքյալն էր, որը սկզբնական շրջանում դաժանորեն հալածում էր քրիստոնյաներին) ոտքերի առջեւ՝ քարկոծում են Նախասարկավագին (տե՛ս Գործք Է 54–59):

Ս. Ստեփանոսը ժողովականներից քարկոծվելու ժամանակ աղոթում է Տիրոջը՝ խնդրելով. «....սա մեղք մի՛ համարիր նրանց» (Գործք Է 59): Ս. Ստեփանոսը, ավանդելով հոգին, դարձավ Քրիստոսի համար նահատակված առաջին վկան ու մարտիրոսը, ուստի կոչվեց Նախավկա:

Ս. Ստեփանոս Նախավկան երկրային կյանքի ընթացքում իր հավատը արդյունավորեց ատվածահաճ գործերով, ապա վկայելով խոստացված Մեսիայի՝ ճշմարիտ Աստծու մասին՝ նահատակվեց եւ միացավ Տիրոջ երկնային զորքին:

Ս. Ստեփանոսը, ըստ իր անվանակոչության, վայելչագույն պսակ եւ արքայական թագ ստացավ Աստծուց, եւ նրա շնորհիվ այսօր պսակվում ու փառավորվում է Ընդհանրական Եկեղեցին:

Ինչպես որ եկեղեցական հայրերն են բնութագրում քրիստոնեական աշխարհի ու Եկեղեցու առաջին սուրբ նահատակ Ստեփանոսին, նա լուսե սյուն է, որի ներքո վկաների ժողովն է գումարվում: Նա սուրբ մոր՝ Եկեղեցու սուրբ որդին է, նաեւ նրա պարծանքը: Ստեփանոսը քրիստոնեության պարծանքն է ու լռեցումը հրեական հանդիմանության եւ հեթանոսական բարբաջանքների: Նա սրբերի ճանապարհն է, որով գնալով՝ նրանք, առանց մոլորության ու գայթակղության, կհանդիպեն Ամենասուրբ Երրորդությանը: Ստեփանոսը վկայությունն է շնորհների, դեպի նահատակություն առաջնորդող հայրը բոլոր սերունդների: Նա, նահատակվելով անօրենների ձեռամբ, հանապազ կենդանի է իր Տիրոջով ու բոլոր վկաներին դեպի աստվածային խորանն ուղեկցող նվիրակն է: Հիրավի, Ս. Ստեփանոսը արքայական սեղանի պսակավորն ու մասնակիցն է սրբության խորհրդի: Նա առաքինության կրողն ու ամեն տեսակի հեշտություններն արհամարհողն է:

Ս. Ստեփանոսի նահատակությամբ սքանչանում ենք ոչ միայն մենք՝ մարդ արարածներս, այլ նաեւ հոգեղենների անյութեղեն զորությունները: Նախասարկավագի վկայությամբ պայծառանում է Եկեղեցին, քանի որ նրա՝ կեղծ բարեպաշտների դեմ հակաճառությամբ վերջիններս կարկամեցին, իսկ չմկրտվածները, քրիստոնեական վարդապետությանն ականջալուր լինելով, դարձան Քրիստոսի ճշմարիտ հետեւորդներ ու նահատակությամբ հաստատեցին իրենց հավատքը:

Համաձայն վարքագրական աղբյուրների՝ Պողոսի ուսուցիչ Գամաղիելը եւ Հիսուսի ծածուկ աշակերտ Նիկոդեմոսը Ս. Ստեփանոս Նախավկային թաղում են իրենց ագարակում (այստեղ են հետագայում թաղել նաեւ նրանց): Որոշ ժամանակ անց Ս. Ստեփանոսի նշխարները հայտնաբերում է Ղուկիանոս անունով մի երեց, իսկ Երուսաղեմի հայրապետ Հովհանը դրանք ամփոփում է Ս. Սիոնում: Ե դարում Հուլիանե իշխանուհին Երուսաղեմում գտնում է Նախավկայի տապանակը եւ այն բերում Կ. Պոլիս. սրբի տապանակի միջոցով բազմաթիվ հրաշքներ են գործվում: Հետագայում Ս. Ստեփանոս Նախավկայի տապանակն ու նշխարները տարվում են Վենետիկ եւ ամփոփվում տեղի Ս. Գեւորգ կղզու մայր եկեղեցում:

Ո՜վ Սուրբ Ստեփանոս, մեր մեղքերին թողություն հայցիր բարերար Աստծուց, որպեսզի քո այս հիշատակի տոնախմբությունը կատարելով եւ հաղորդվելով մեր կենարար Աստծու կենդանի մարմնին ու անմահացնող արյանը՝ առանց դատապարտության արժանանանք խոստացված բարիքներին քեզ եւ մյուս բոլոր սրբերի հետ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով ու ողորմությամբ. ամեն:

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Տաղ Սրբոյն Ստեփանոսի

Ստեփանոս քաղցրիկ տատրակ,
Սուրբ զուարթուն անուն «Պսակ»,
Գեղեցկացար անօրինակ,
Բայց ներկեցար արեան գունակ:
Տեառն Յիսուսի քաջ նահատակ,
Այգւոյ Նորին վարդ, մանուշակ,
Թէպէտ մարմնով, սակայն հրեշտակ,
Ի Քրիստոսէ առեր պսակ:
Կոչեմք առ քեզ սուրբ նահատակ,
Հողանիւթեայ մարմնով հրեշտակ,
Մարտիրոս սուրբ եւ վկայ,
Որ քարկոծմամբ կատարեցար.
Յորդոր տօնիս քո յիշատակ,
Արեան սրբոյն հեղմամբ վտակ,
Առ Տէր լիցի սուրբ պատարագ,
Պահել զմեզ միշտ անվտանգ:

Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնի առիթով

Քրիստոսի սո՛ւրբ առաքյալ
Ու նահատակ-նախավկա,
Որ քարկոծվել դու հանձն առար,
Մեռար մարմնով, բայց եւ անմահ
Հոգիդ այսօր առավ թեւեր՝
Հրեշտակակից դարձնելով քեզ,
Որ առաքես դու աներեր
Աղոթքը մեր ու մատուցես
Փրկչին համայն եղծ-մարդկության
Եվ հայցես սերն Աստվածության...

Բարեխոսի՛ր քո սուրբ արյամբդ,
Որ Տերն Ինքը թագավորի
Նաեւ մեր եղծ հոգիներում,
Եվ վկայիդ նմանությամբ
Նաեւ մեզ էլ այն շնորհն անի,
Որ մեր կյանքով եւ թե մահվամբ
Փրկչի անունը փառաբանվի
Եվ հողեղեն այս աշխարհում,
Եվ թե անեղծ երկինքներում...

Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սարկավագի առաքելությունը

Սարկավագ բառն առաջացել է հունարեն «διάκονος»-ից, որը թարգմանվում է սպասավոր, օգնական: Արտահայտելով նշյալ իմաստը՝ «սարկավագ» հասկացությունը դիպուկ բնութագրում է հոգեւոր առաքելության աստվածախնդիր բնույթը. ծառայել, սպասավորել, խնամել, մխիթարել: Աստվածաշնչյան որոշ տեղիներում «սպասավոր» բառը երբեմն գործածվում է այլ իմաստներով. այսպես՝ Պողոս առաքյալը աշխարհիկ կառավարչին անվանում է Աստծու սպասավոր (Հռոմ. ԺԳ 4), նա Աստծու Որդու մասին խոսելիս ասում է. «Քրիստոսի՝ թլփատվածներին սպասավոր լինելը Աստծու ճշմարտության համար էր» (Հռոմ. ԺԵ 8), առաքյալն անգամ իրեն է սպասավոր անվանում (տես Եփ. Գ 7, Կող. Ա 23):

Սարկավագությունն իրապես եկեղեցական կյանքի հիմքն է, քանի որ յուրաքանչյուր քրիստոնյայի, մասնավորապես հոգեւորականի առաքելությունն է՝ լինել Քրիստոսի արտացոլանքը: Ինքը՝ Փրկիչը, Իր մասին հայտնում է. «....մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու եւ իր անձը տալու որպես փրկանք շատերի փոխարեն» (Մատթ. Ի 28), ուստի անմիջապես ակնհայտ են դառնում սարկավագի կոչման պատիվն ու գերապանծությունը: Սարկավագությունը, հիրավի, հոգեւոր-եկեղեցական գործունեության սկիզբն է: Հույժ կարեւոր է, որ ապագա հոգեւորականն իր եկեղեցական գործունեությունն սկսի խոնարհ ծառայությամբ: Միաժամանակ չպետք է մոռանալ, որ Աստծուն ծառայելը որքան ծանր ու դժվարին է, նույնքան եւ քաղցր է ու թեթեւ (հմմտ. Մատթ. ԺԱ 29): Ինչպես դժվարությունն ու պատասխանատվությունը, այնպես եւ բովանդակ քաղցրությունն իրենց զանազան երանգներով պատկերվում են եկեղեցականի՝ հոգեւոր առաջին աստիճանի սպասավորության մեջ:

Սարկավագական ծառայությունն առաջացել է Եկեղեցու պատմության սկզբնական փուլում՝ նախ Երուսաղեմում (Գործք Զ 1–6), այնուհետեւ՝ այլ համայնքներում (Փիլիպ. Ա 1, Տիմ. Գ 8–13): Ուստի սարկավագի առաքելությունն ըմբռնելու համար տեղին է անդրադառնալ նրա կոչմանն առաքելական ժամանակաշրջանում:

Վաղ Եկեղեցում սարկավագի աստիճանը կարգել են առաքյալները, որոնք Երուսաղեմի համայնքում այրիներին տրվող նպաստը ճիշտ տնօրինելու, հասարակաց սեղանները սպասարկելու համար առաջարկել են ընտրել «բարի համբավ ունեցող, Սուրբ Հոգով եւ իմաստությամբ լցված յոթ մարդու» (հմմտ. Գործք Զ 3): Ընտրյալները կանգնեցին առաքյալների առջեւ, եւ վերջիններս աղոթելով՝ ձեռքերը նրանց վրա դրեցին (հմմտ. Գործք Զ 1–6): Դեռեւս առաքելական ժամանակաշրջանից սարկավագաց ընտրությունը տեղի է ունեցել համայնքի վկայության եւ ընտրյալների արժանավորության հիմամբ: Վաղ շրջանում եւ այսօր էլ թեկնածուներն ընտրվում են ողջ համայնքի կամ Եկեղեցու մասնակցությամբ. «Աստուածային եւ երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կոչէ ի դպրութենէ ի սարկաւագութիւն՝ ըստ վկայութեան անձին իւրոյ եւ ամենայն ժողովրդեանս»: Սույն հատվածը քաղված է սարկավագների ձեռնադրության արդի կարգից, ըստ որի՝ եպիսկոպոսը (նախապես համոզված լինելով, որ ձեռնադրվողն իրապես արժանավոր է) հայցում է, որ աստվածային ու երկնային շնորհներով լի ընծայյալը դպրությունից կոչվի սարկավագության: Սա վկայում է սարկավագի կարեւոր եւ հույժ պարտավորեցնող առաքելության մասին:

Այսպես՝ առաքյալները հասկացան, որ այրիների նպաստները բաշխելու, սեղանները սպասարկելու համար չպետք է հրաժարվեն Տիրոջ խոսքը քարոզելուց, ուսուցանելուց, ուստի կարգադրեցին աշակերտներից ընտրել նրանց, ովքեր պատրաստ էին ծառայել՝ հոգալով համայնքի նյութական կարիքները, խնամելով որբերին, ծերերին ու ընչազուրկներին: Արդյունքում Երուսաղեմում աշակերտների թիվը սաստիկ ավելացավ: Սուրբ առաքյալներից աղոթքի եւ ձեռնադրության միջոցով իրենց կոչումն ստացան առաջին սարկավագները: Սարկավագի գործառույթներն ու պարտականությունները հստակ թվարկված կամ նշված չեն Աստվածաշնչում, սակայն սուրբգրային վկայությունների հիմամբ կարող ենք որոշակի պատկերացում կազմել այդ մասին. ենթադրվում է, որ սարկավագական ծառայությունը ներառում էր այն գործառույթները, որոնք հոգեւոր հովվի պարտականությունը չէին: Փոխարենը՝ Աստվածաշունչ մատյանում պարզորոշ սահմանված է, թե ինչպիսին պետք է լինեն սարկավագները. «....թող լինեն պարկեշտ, ոչ երկդիմի խոսող, ոչ գինեսեր, ոչ շահամոլ, այլ թող պահեն հավատի խորհուրդը մաքուր խղճով: Նախ իրենք թող փորձի ենթարկվեն եւ եթե անմեղադրելի գտնվեն, ապա պաշտոն կատարեն» (Ա Տիմ. Գ 8–10): Նույնպես եւ նրանց ընտանիքի անդամները պետք է լինեին պարկեշտ, ոչ չարախոս, հեզ եւ ազնիվ (հմմտ. Ա Տիմ. Գ 11–13): Ի շարս թվարկվածի, ինչպես արդեն նշվել է, սարկավագը պետք է բարի համբավ ունեցող, Սուրբ Հոգին ճշմարտապես կրող եւ իմաստությամբ օժտված մեկը լինի, ինչի արտահայտությունը կրկին տեսնում ենք սարկավագական ձեռնադրության կարգում՝ ավագ սարկավագի՝ եպիսկոպոսի հարցմանն ուղղված պատասխանում. «....գիտեմք եւ վկայեմք զսա արժանաւոր գոլ՝ առ ի բառնալ զլուծ աստիճանաց՝ ունելով սրբութիւն եւ իմաստութիւն»: Համաձայն Պողոս առաքյալի խոսքի՝ սարկավագական ծառայությունն իրապես մեծ պատիվ եւ օրհնություն է, «որովհետեւ այն սարկավագները, որ լավ են ծառայում, իրենց համար շահում են բարի աստիճան եւ մեծ համարձակություն կունենան ի Քրիստոս Հիսուս իրենց ունեցած հավատի մեջ» (Ա Տիմ. Գ 13):

Այսպիսով՝ հստակ է, որ առաքելական շրջանում սարկավագը պետք է զբաղվեր նաեւ հոգեխնամությամբ. նրա պարտականություններն էին՝ նպաստ հավաքել ու այն կարիքավորներին բաժանել, աղքատներին, հիվանդներին, այրիներին, որբերին եւ հալածյալներին այցելել ու նրանց կարիքները հոգալ, սակայն գլխավորաբար՝ սեղանները սպասարկել: Ի դեպ, ուշագրավ է, որ հունարեն «դիակոնեն» բայը Նոր Կտակարանում հաճախ գործածվում է սեղանների սպասավորությունը մատնանշելու դեպքում: Դրանից հետեւում է, որ սարկավագի հիմնական պարտականությունը, ի մասնավորի, Հաղորդության ժամանակ կամ Սիրո ճաշին սպասավորելն էր: Սարկավագի այս գործառույթի մասին է վկայում նաեւ հայ ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը «Հայերեն արմատական բառարան»-ում զետեղված «սարկաւագ» բառի հետեւյալ բացատրությամբ՝ «եկեղեցական պաշտօնեայ, որը սպասաւորում է պատարագչին»: Թովմասի ապոկրիֆ «Գործք առաքելոց»-ում նկարագրվում է, թե ինչպես է առաքյալը սպասավորներին կամ սարկավագներին պատվիրում սեղան պատրաստել Հաղորդության համար եւ ծածկոց գցել դրա վրա: Ահա այսպիսի հանգամանքներում է ձեւավորվել սարկավագի հիմնական առաքելությունը. սպասավորել Տիրոջ սուրբ խորանին եւ Եկեղեցու խորհուրդների ժամանակ. «Մ՛ռ իշխանութիւն ընթեռնուլ զսուրբ Աւետարանս յԵկեղեցիս Աստուծոյ.... Մ՛ռ քեզ հրաման խնկարկել եւ բուրել հոտ անուշութեան ի սպասաւորութիւն խորհրդոյն»: Այս հատվածը՝ դարձյալ քաղված ձեռնադրության կարգից, լավագույնս մատնանշում է, որ սարկավագը Հայ Եկեղեցում նաեւ Աստվածաշունչ ընթերցողն է: Դեռեւս առաքելական շրջանում առաջին սարկավագներից Ստեփանոսը եւ Փիլիպոսը քարոզում էին Աստծու խոսքը: Փիլիպոսն ինքնուրույնաբար նաեւ մկրտում էր նորադարձներին, սակայն իր ձեռքը չէր դնում նրանց վրա, մինչդեռ առաքյալներից Պետրոսն ու Հովհաննեսը ձեռնադրում էին նոր մկրտվածներին, որպեսզի նրանք Սուրբ Հոգին ստանան (հմմտ Գործ. Ը 12–18):

Արդեն վաղ Եկեղեցում սարկավագները երբեմն պատրիարքների կամ միտրոպոլիտների վստահված անձինք են եղել. օրինակ՝ Ս. Աթանաս Ալեքսանդրացին, որն այդ ժամանակ դեռեւս սարկավագ էր, մասնակցել է Նիկիայի Ա՝ 325 թ. տիեզերաժողովին եւ Ալեքսանդրիայի եպիսկոպոսի անունից դատապարտել է Արիոսի ուսմունքը: Պատահական չէ, որ Եկեղեցու որոշ հայրեր՝ Իգնատիոսը, Հուստինոսը, Կիպրիանոսը, Տերտուղիանոսը սարկավագներին համարել են քահանայական դասակարգի անդամ՝ իբրեւ քահանայի ու եպիսկոպոսի օգնական: Եկեղեցու պատմության մեջ ունեցել ենք այնպիսի սարկավագներ, ինչպիսիք են Եփրեմ Ասորին, Աթանաս Մեծը, իսկ հայ իրականության մեջ՝ ԺԱ դարի փիլիսոփա, մանկավարժ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը, ԺԷ դարի նշանավոր պատմիչ, մատենագիր Զաքարիա Քանաքեռցին (Սարկավագ): Ուշագրավ է, որ Հովհաննես Արծիշեցու գրչին պատկանող «Պատարագի մեկնութեան» մեջ «սարկաւագ» բառը դիտարկվում է իբրեւ բարդ բառ՝ կազմված «սար-գլուխ» եւ «աւագ» բառերից: Մեկ այլ բացատրության համաձայն՝ «սարկաւագ» բառն առաջացել է «սա կայր աւագ» արտահայտությունից: Այս վերջին երկու մեկնաբանությունների իմաստային շերտն առավել է ընդգծվում, երբ հայացք ենք նետում Հայոց պատմության դրվագներին, որոնց գլխավոր հերոսները սարկավագներն են եղել: Այսպես՝ Մովսես Խորենացին հիշատակում է երբեմնի Խադ սարկավագին, որը «աղքատասեր, հավատքով, քաջ ու առաքինի» էր: Ռշտունյաց գավառից Քաջաջ սարկավագը, ինչպես նշում է Եղիշեն, իր հավատքի զորությամբ ու կորովով մինչեւ իսկ նահատակության սուրբ պսակն է ընդունում՝ հրաժարվելով զրադաշտական զազիր պաշտամունքից:

Անդրադառնալով Հայ Եկեղեցում սարկավագների դերին եւ առաքելությանը՝ Ներսես վրդ. Մելիք-Թանգյանն ստուգորեն նշում է նրանց հետեւյալ պարտականությունները. 1. ընդունում էին ժողովրդից ստացած նվերները, հացը, գինին, պտուղները եւ անուն-անուն նշում, որ քահանան Սուրբ Պատարագի ժամանակ հիշատակի, 2. եկեղեցում քարոզկարդաց էին՝ ուղղորդելով ժողովրդին աղոթքի, ծնրադրելու՝ ապաշխարելու ժամանակ, իսկ ապաշխարողներին կանգնեցնում էին իրենց տեղերում եւ ժամանակին եկեղեցուց դուրս հանում, 3. Ավետարան էին կարդում եկեղեցում, 4. հաղորդվելու էին բերում եկեղեցում գտնվողներին կամ երբեմն գնում էին բացակաների տներն ու հաղորդություն տալիս՝ ձեռքում բռնած պահելով սկիհը եւ թաշկինակը, 5. նրանց էին հանձնում Ս. Սեղանի վրա գտնվող սրբազան իրերն ու անոթները՝ պահպանելու համար, 6. հսկում էին եկեղեցում կարգապահությունը. որ լռություն լինի: Վարդապետը, ի թիվս վերոշարադրյալի, նշում է, որ սարկավագները չմկրտվածներին ուսուցանում էին քրիստոնեական վարդապետությունը, մասնակցում էին նաեւ տարեկան ժողովներին եւ այլն:

Այսօր եւս չի փոխվել սարկավագի պատասխանատու առաքելությունը. սպասավորել Աստծու Ս. Սեղանը եւ սիրո ծառայություն մատուցել մարդուն. «Չէ՞ որ բոլորն էլ սպասարկող հոգիներ են, որոնք ուղարկվում են ի սպասավորություն նրանց, որ ժառանգելու են փրկությունը» (Եբր. Ա 14): Հաստատապես՝ սարկավագի կոչումը աստվածադիր շնորհ է: Մեզ համար մշտապես հիշատակելի օրինակ եւ պայծառ վկայություն է Ս. Ստեփանոս Նախասարկավագի կերպարը, որը, իբրեւ առաջամարտիկ, մինչեւ մահ դավանեց Քրիստոսին եւ հանուն իր հավատքի քարկոծվելով՝ ընծայվեց Փրկչին՝ մահվան ստվերագույժ խավարի փոխարեն Նրա լուսաշող պատկերը տեսնելով: Բարսեղ Կեսարացին, խոսելով սարկավագի կոչման մասին, նշում է, որ սարկավագությունը խիստ կարեւոր եւ առանցքային տեղ է զբաղեցնում հոգեւորականության առաքելության մեջ՝ մարդկանց ծառայելու միջոցով Աստծուն ծառայելու ուղին սրբության եւ աստվածաբնակության ճանապարհ համարելով. «Սուրբ Հոգին էլ Ստեփանոսի միջոցով ծառայում էր այրիների ու աղքատների դասերին, եւ իզուր չէ, որ կարող ենք այս սքանչելի մարդուն Սուրբ Երրորդության բնակարան կոչել, քանի որ այնտեղ, որտեղ Սուրբ Հոգին է, այնտեղ են նաեւ Որդին եւ Հայրը»:

Դա իրապես լավագույն վարձատրությունն ու պարգեւն է, որ երբեւէ կարող ենք ակնկալել Աստծուն ծառայելու մեր սրբազան առաքելության մեջ, առաքելություն, որ սկսվում է եկեղեցական խոնարհ ծառայությունից՝ Տիրոջ Ս. Սեղանը սպասավորելուց, եւ բարձրանում է մինչեւ երկինք՝ իր լրումին հասնելով Աստծու թագավորության մեջ՝ սրբերին սեղանակից լինելու արժանավորությամբ:

Ելենա ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ 19–23

Նամակ տասնյոթերորդ

ԿԱՐՈՂԱՆԱԼ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՐԵՆ ԲԱՆԱՎԻՃԵԼ

Կյանքում անհրաժեշտ է լինում շատ բանավիճել, առարկել, հերքել ուրիշների կարծիքները, չհամաձայնել:

Մարդը լավագույնս ցույց է տալիս իր դաստիարակությունը, երբ քննարկում, բանավիճում է՝ պաշտպանելով սեփական համոզմունքները:

Բանավեճի ժամանակ անմիջապես բացահայտվում են անձի կիրթ լինելը, մտածողության տրամաբանությունը, քաղաքավարությունը, մարդկանց հարգելու կարողությունը եւ... ինքնահարգանքը:

Եթե բանավեճի ժամանակ մարդը մտահոգվում է ոչ այնքան ճշմարտության, որքան իր հակառակորդին հաղթելու մասին, չի կարողանում լսել իր հակառակորդին, ձգտում է նրան ձայնակոխ անել, մեղադրանքներով վախեցնել, ապա նա դատարկ մարդ է, եւ նրա բանավեճը նույնպես դատարկ է:

Իսկ ինչպե՞ս է վեճը վարում խելացի եւ քաղաքավարի բանավիճողը:

Ամենից առաջ ուշադիր լսում է իր հակառակորդին՝ մարդուն, որը համաձայն չէ իր կարծիքի հետ: Ավելին՝ եթե իր համար ինչ-որ բան անհասկանալի է հակառակորդի դիրքորոշումներում, լրացուցիչ հարցեր է տալիս: Եվ մի բան էլ. եթե նույնիսկ հակառակորդի բոլոր դիրքորոշումները հստակ են, ընտրում է նրա պնդումների ամենաթույլ կետերն ու վերստին հարցնում՝ արդյո՞ք դա է պնդում իր հակառակորդը:

Ուշադիր լսելով իր հակառակորդին եւ կրկին հարցնելով՝ բանավիճողը հասնում է երեք նպատակի. ա. հակառակորդը չի կարողանա առարկել, որ իրեն «սխալ են հասկացել», որ ինքը «դա չի պնդել», բ. բանավիճողը հակառակորդի կարծիքի նկատմամբ իր ուշադիր վերաբերմունքով անմիջապես գրավում է նրանց համակրանքը, ովքեր հետեւում են բանավեճին, գ. բանավիճողը, լսելով եւ կրկին հարցնելով, ժամանակ է շահում սեփական առարկությունները լավ կշռադատելու (իսկ դա նույնպես պակաս կարեւոր չէ), բանավեճում իր դիրքորոշումը հստակեցնելու համար:

Հետագայում՝ առարկելիս, երբեք չի կարելի դիմել բանավեճի անթույլատրելի եղանակների, եւ անհրաժեշտ է պահպանել հետեւյալ կանոնները. ա. առարկել, սակայն չմեղադրել, բ. «չկարդալ սրտի մեջինը», չփորձել ներթափանցել հակառակորդի համոզմունքների շարժառիթների մեջ («այդ տեսակետին եք, որովհետեւ այն ձեզ համար ձեռնտու է», «այդպես եք ասում, որովհետեւ դուք ինքներդ այդպիսին եք» եւ նման բաներ), գ. մի՛ շեղվեք բանավեճի նյութից. պետք է կարողանալ բանավեճը հասցնել ավարտին, այսինքն՝ կամ հակառակորդի դրույթների հերքմանը, կամ հակառակորդի իրավացիության ճանաչմանը:

Ցանկանում եմ հատկապես կանգ առնել իմ վերջին պնդման վրա:

Եթե հենց սկզբից բանավեճը վարում եք քաղաքավարի եւ խաղաղ՝ առանց մեծամտության, ապա դրանով իսկ ձեզ համար ապահովում եք հանգիստ՝ արժանապատիվ նահանջ:

Հիշեք՝ բանավեճում առավել գեղեցիկ բան չկա, քան անհրաժեշտության դեպքում հակառակորդի լրիվ կամ մասնակի իրավացիությունը հանգիստ ընդունելը: Դրանով նվաճում եք ձեզ շրջապատողների հարգանքը: Դրանով ասես թե նաեւ ձեր հակառակորդին եք զիջողականության կոչ անում՝ նրան ստիպելով մեղմել իր դիրքորոշման ծայրահեղությունները:

Իհարկե, հակառակորդի իրավացիությունը կարելի է ընդունել միայն այն դեպքում, երբ գործը չի առնչվում ձեր ընդհանուր համոզմունքներին, ձեր բարոյական սկզբունքներին (դրանք միշտ պետք է լինեն ամենաբարձրը):

Մարդը չպետք է լինի հողմացույց, չպետք է զիջի ընդդիմախոսին միայն նրան դուր գալու համար կամ, Աստված մի արասցե, վախկոտությունից, պաշտոնասիրության նկատառումներից դրդված եւ այլն:

Սակայն արժանապատվորեն զիջել մի հարցում, որը չի ստիպում հրաժարվել ձեր ընդհանուր համոզմունքներից (հուսով եմ՝ բարձր), կամ արժանապատվորեն ընդունել սեփական հաղթանակը՝ չչարախնդալով բանավեճում պարտվածին, չիրճվելով, չվիրավորելով ընդդիմախոսի ինքնասիրությունը, որքա՜ն գեղեցիկ է այդ:

Մտավոր մեծագույն հաճույքներից մեկը բանավեճին հետեւելն է, որը վարում են հմուտ եւ խելացի վիճաբանողները:

Բանավեճում չկա առավել հիմար բան, քան առանց փաստարկների վիճաբանելը: Հիշո՞ւմ եք երկու տիկնանց խոսակցությունը Գոգոլի «Մեռած հոգիներ»-ում.

«— Սիրելի՛ս, դա խայտաբղետ է:

— Ախ, ո՛չ, խայտաբղետ չէ:

— Ախ, խայտաբղետ է»:

Երբ բանավիճողը փաստարկներ չունի, պարզապես հայտնվում են «կարծիքները»:

Նամակ տասնութերորդ

ՍԽԱԼՎԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ

Չեմ սիրում հեռուստատեսային հաղորդումներ դիտել:

Բայց կային հաղորդումներ, որոնք ես միշտ դիտել եմ. օրինակ՝ պարեր սառույցի վրա: Հետո հոգնեցի դրանցից եւ դադարեցի դիտելուց՝ դադարեցի հետեւողականորեն, նայում եմ միայն դիպվածականորեն:

Ամենից շատ ինձ դուր է գալիս, երբ նա, ում համարում են թույլ, կամ ով դեռեւս մուտք չի գործել «ճանաչվածների» շարքերը, հաջող ելույթ է ունենում: Սկսնակների կամ անհաջողակների հաջողությունն առավել մեծ գոհունակություն է պատճառում, քան հաջողակների հաջողությունը:

Բայց բանն այդ չէ: Ամենից շատ ինձ հիացնում է, թե ինչպես է «չմշկորդը» (այդպես էին հնում անվանում սառույցի վրայի մարզիկներին) պարի ժամանակ ուղղում իր սխալները: Ընկավ եւ կանգնում է՝ արագ վերադառնալով պարին, եւ այնպես է պարում, կարծես թե անկում չի էլ եղել: Սա արվեստ է՝ մեծ արվեստ:

Սակայն չէ՞ որ կյանքում անհամեմատ ավելի շատ սխալներ են լինում, քան սառցե դաշտում: Եվ պետք է կարողանալ վեր ելնել սխալներից՝ ուղղել դրանք անհապաղ եւ... գեղեցիկ: Այո՛, հենց գեղեցիկ:

Երբ մարդը համառում է իր սխալի մեջ կամ չափից ավելի անհանգստանում, մտածում, որ կյանքն ավարտվել է, «ամեն ինչ մեռած է», դա ցավալի է թե՛ իր, թե՛ շրջապատողների համար: Շրջապատողներն անհարմարություն են զգում ոչ թե հենց սխալի, այլ այն բանի պատճառով, թե ինչ անկարողություն է ցուցաբերում սխալվողն այն ուղղելու գործում:

Ինքդ քեզ խոստովանել սեփական սխալը (պարտադիր չէ դա հրապարակավ անել. այդժամ դա կամ ամոթալի է, կամ՝ կոտրատանք) միշտ չէ, որ հեշտ է. փորձ է անհրաժեշտ: Փորձ է պետք՝ թույլ տրված սխալից հետո աշխատանքի մեջ որքան հնարավոր է շուտ եւ հեշտ ներգրավվելու՝ այն շարունակելու: Իսկ շրջապատողները չպետք է ստիպեն մարդուն ընդունել սխալները, պետք է շահագրգռեն դրանք ուղղելու. արձագանքել այնպես, ինչպես հանդիսատեսն է արձագանքում մրցումների ժամանակ՝ երբեմն նույնիսկ ընկածին կամ իր սխալը հեշտությամբ ուղղողին առաջին իսկ հարմար առիթի դեպքում ուրախ ծափահարություններով պարգեւատրելով:

Նամակ տասնիններորդ

ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՍԵԼ

Հագուկապի մեջ անփույթ լինելն ամենից առաջ անհարգալից վերաբերմունք է ձեզ շրջապատող մարդկանց նկատմամբ, այո՛, սեփական անձի հանդեպ նույնպես: Խնդիրը պճնամոլաբար հագնված լինելը չէ: Պճնապաճույճ հագուստների մեջ, հնարավոր է, կա սեփական նրբագեղության մասին չափազանցված պատկերացում, եւ պճնամոլը մեծավ մասամբ կանգնած է ծիծաղելի լինելու եզրին: Անհրաժեշտ է հագնվել մաքուր եւ կոկիկ, այն ոճով, որն ամենից շատ է ձեզ սազում եւ համապատասխանում ձեր տարիքին: Մարզական հագուստը ծերունուն չի դարձնի մարզիկ, եթե նա սպորտով չի զբաղվել: «Պրոֆեսորական» բոլորագլխարկը եւ սեւ խիստ կոստյումը կիրառելի չեն լողափում կամ անտառում սունկ հավաքելիս:

Իսկ ինչպե՞ս գնահատել վերաբերմունքը լեզվի նկատմամբ, որով խոսում ենք: Լեզուն առավելապես, քան հագուստը, վկայում է մարդու ճաշակի, նրա՝ շրջակա աշխարհի եւ իր անձի նկատմամբ վերաբերմունքի մասին:

Մարդու խոսքում տարբեր տեսակի փնթիություններ կան:

Եթե մարդը ծնվել ու ապրում է քաղաքից հեռու եւ խոսում է իր բարբառով, դրանում որեւէ փնթիություն չկա: Չգիտեմ՝ ինչպես է ուրիշների դեպքում, բայց ինձ այս տեղական բարբառները դուր են գալիս, եթե դրանք խստորեն պահպանված են: Դուր է գալիս դրանց մեղեդայնությունը, դուր են գալիս տեղական բառերը, տեղական արտահայտությունները: Բարբառները հաճախ ռուս գրական լեզվի հարստացման անսպառ աղբյուր են լինում: Մի անգամ ինձ հետ զրույցի ժամանակ գրող Ֆյոդոր Ալեքսանդրովիչ Աբրամովն ասաց. «Ռուսական Հյուսիսից Պետերբուրգի կառուցման համար գրանիտ էին բերում եւ բերում էին խոսքը՝ խոսքն ամփոփված՝ բիլինաների, ողբերի, քնարական երգերի... քարե սալիկներում»: «Ուղղել» բիլինաների լեզուն՝ այն համապատասխանեցնել ռուս գրական լեզվի չափորոշիչներին՝ դա ուղղակի բիլինաները փչացնել է:

Այլ բան է, եթե մարդը երկար ժամանակ ապրում է քաղաքում, տիրապետում է գրական լեզվի չափորոշիչներին, սակայն պահպանում է իր գյուղի լեզվի ձեւերն ու բառերը: Դա կարող է լինել այն պատճառով, որ նա վերջիններս համարում է գեղեցիկ եւ հպարտանում է դրանցով: Դա ինձ տհաճություն չի պատճառում: Թող նա եւ օյասի, եւ պահպանի իր սովորական մեղեդայնությունը: Դրանում տեսնում եմ սեփական հայրենիքով՝ սեփական գյուղով հպարտանալը: Դա վատ չէ եւ մարդուն չի նվաստացնում: Դա գեղեցիկ է այնպես, ինչպես այժմ մոռացված շեղօձիք վերնաշապիկը, սակայն միայն այն մարդու հագին, որն այն կրել է մանկուց, սովորել դրան: Իսկ եթե նա հագել է այն, որ փայլի դրանով, ցույց տա, որ ինքն «իսկությամբ գյուղական է», ապա դա եւ ծիծաղելի է, եւ անպատկառ. «Նայե՛ք ինչպիսին եմ ես. թքած ունեմ, որ ապրում եմ քաղաքում: Ցանկանում եմ նման չլինել ձեզ՝ բոլորիդ»:

Խոսքում, ինչպես նաեւ վարվեցողության մեջ կոպտությամբ խրոխտանալը, հագուստի փնթիությունը տարածված երեւույթներ են, եւ հիմնականում վկայում են մարդու հոգեբանական անպաշտպանվածության, նրա թուլության, այլ ոչ թե ուժի մասին: Խոսողը ձգտում է կոպիտ կատակով, սուր արտահայտությամբ, հեգնանքով, լկտիությամբ իր մեջ ճնշել վախի, երկյուղի, երբեմն նաեւ պարզապես անհանգստության զգացումը: Ուսուցիչների կոպիտ մականուններով հենց թուլակամ աշակերտներն են ցանկանում ցույց տալ, որ նրանցից չեն վախենում: Դա կատարվում է կիսագիտակցաբար: Արդեն չեմ խոսում այն մասին, որ դա չդաստիարակվածության, անկրթության, երբեմն նաեւ դաժանության նշան է: Բայց հենց նույն արմատական պատճառն է ընկած առօրյա կյանքի այն երեւույթներին վերաբերող ցանկացած կոպիտ, լկտի, անխոհեմ հեգնական արտահայտությունների հիմքում, որոնք ինչ-որ կերպ վիրավորում են խոսողին: Կոպիտ խոսող մարդիկ դրանով կարծես թե ցանկանում են ցույց տալ, որ իրենք վեր են այն երեւույթներից, որոնցից իրականում վախենում են: Ցանկացած ժարգոնային, լկտի արտահայտությունների եւ հայհոյանքի հիմքում ընկած է թուլությունը: «Բառեր թքող» մարդիկ հենց այն պատճառով են ցուցադրում սեփական արհամարհանքը կյանքում իրենց վնասվածք պատճառող երեւույթների նկատմամբ, քանզի դրանք իրենց անհանգստացնում, տանջում, հուզում են, որովհետեւ իրենք իրենց թույլ են զգում՝ դրանց դեմ անպաշտպան:

Իրապես ուժեղ եւ առողջ, հավասարակշռված մարդն առանց անհրաժեշտության բարձր չի խոսի, չի հայհոյի եւ չի գործածի ժարգոնային բառեր: Չէ՞ որ նա վստահ է, որ իր խոսքն արդեն իսկ ծանրակշիռ է:

Մեր խոսքը կյանքում մեր ընդհանուր վարքագծի ամենակարեւոր մասն է: Եվ այն կերպից՝ ինչպես է մարդը խոսում, կարող ենք միանգամից եւ դյուրությամբ դատել, թե ում հետ գործ ունենք. կարող ենք որոշել մարդու կիրթ լինելու, նրա հոգեբանական հավասարակշռության, նրա հնարավոր «բարդութավորվածության» աստիճանը (այդպիսի տխուր երեւույթ է առկա որոշ թույլ մարդկանց հոգեբանության մեջ, բայց հիմա դա բացատրելու հնարավորություն չունենք. դա մեծ եւ յուրահատուկ հարց է):

Լավ, հանգիստ, կիրթ խոսք պետք է սովորել երկար եւ ուշադիր՝ լսելով, մտապահելով, նկատելով, ընթերցելով եւ ուսումնասիրելով: Թեեւ դա դժվար է, սակայն անհրաժեշտ է, պետք է: Մեր խոսքը ոչ միայն մեր վարքագծի կարեւորագույն մասն է (ինչպես արդեն ասացի), այլ նաեւ մասն է մեր անձի, մեր հոգու, մտքի, միջավայրի ազդեցություններին չտրվելու մեր կարողության, եթե այն «քաշում է»:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ

Հին Թաղերի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին

Հին Թաղերից՝ Արարատ. *Մի գյուղի խաթարված կյանք*

Իմ Արցախը —
Ղարաբաղը իմ կարոտն է սրտիս մեջ,
Իմ Արցախը —
Ղարաբաղն իմ՝ առավոտ է
սրտիս մեջ....

Է. Հակոբյան

Ցուրջ երկու տարի արդեն չեն ղողանջում Արցախ աշխարհի Հին Թաղեր գյուղի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու զանգերը: Վերջին տարիներին երազանքով ու նվիրումով վերանորոգված եկեղեցում այլեւս Ս. Պատարագ չի մատուցվում, չի հնչում հայի աղոթքը...

Հին Թաղեր գյուղն Արցախի Հանրապետության Հադրութի շրջանում էր մինչեւ 2020 թ. դեկտեմբերի 12-ը, երբ Ադրբեջանի զինված ուժերը հարձակվեցին Հին Թաղեր եւ Խծաբերդ գյուղերի վրա՝ խախտելով նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագիրը. դեկտեմբերի 16-ին արդեն երկու գյուղերն էլ ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ էին:

Պատմաբան Շահեն Մկրտչյանը նշում է, որ Հին Թաղերը (Թաղլար) Դիզափայտի ամենահին բնակավայրերից մեկն է՝ Կատարո վանքից 4 կմ հարավ: Ըստ նրա՝ Հին Թաղլարի տարածքում արձանագրվել են մի շարք մեծ ու փոքր հուշարձաններ: Հեղինակը տեղեկություն է հաղորդում Սուրբի բնավայրի մասին, որտեղ պահպանվել են հին եկեղեցու ավերակներն ու կից ընդարձակ գերեզմանատունը: Հուշարձանը տեղացիներն անվանում են «Հանգած եղցի» (*Շ. Մկրտչյան,* Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1985, էջ 127):

Հրանտ Ամիրյանն էլ իր՝ «Դիզափայտ լեռան զավակները» գրքում նշում է, որ Հին Թաղեր գյուղի տարածքը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով, հին բնակատեղիներով, գերեզմանոցներով, բերդերի ու ամրոցների փլատակներով (*Հ. Ամիրյան,* Դիզափայտ լեռան զավակները, Երեւան, 2007, էջ 3):

Հին Թաղերի համայնքապետ Էդիկ Այվազյանը գյուղի պատմությունը ներկայացնելիս շեշտում ու հիշեցնում է, որ հինթաղերցիները ոչ թե Պարսկաստանից ներգաղթյալներ են, այլ այն բնիկ տեղացիների սերունդները, որոնց 1600-ական թվականների սկզբներին պարսից շահը բռնի տեղահանել տարել էր Պարսկաստան: Սակայն սերունդների հիշողության մեջ չի մարել հայրենի հող ու ջրի կարոտը, իրար պատմել են ծննդավայրի մասին եւ արդեն 1800-ականների սկզբներին վերադարձել են պապենական հողերը. «Ո՛չ թե Պարսկաստանի հայեր են, ո՛չ, այլ սերունդները, իրար պատմելով, հետ են եկել, վերաբնակվել այդ նույն պապական գյուղերում»:

Համայնքապետը գյուղի հետ կապված քաղցր հիշողություններ ունի. «Ինը բնական աղբյուր կար գյուղում: Մի աղբյուր ունեինք, անունը՝ Մկնատամի աղբյուր: Ես էլ, որ փոքր էի, գնում ջուրը բերում էի, մայրս քսում էր երեսիս, ձեռքերիս, բուժվում էի. բուժիչ ջուր էր աղբյուրի ջուրը»:

Հին Թաղեր գյուղի բնակիչներն ու այցելուները վկայում են, որ եկեղեցիներից բացի՝ նաեւ այլ սրբավայրեր ու մատուռներ կան: Օրինակ՝ կա մի սրբավայր, որտեղ ուխտի են գնացել հատկապես զավակ չունեցող կանայք: Տանում էին նաեւ չխոսկան երեխաներին. ուխտագնացությունից եւ մատաղ անելուց հետո բուժվում էին:

Մինչեւ 2020 թ. դեկտեմբերը գյուղի կյանքը պրն Այվազյանը նկարագրում է մեկ պարզ նախադասությամբ. «Մարդիկ ապրում էին, սովորական կյանք էր, էլի. որն անասնապահությամբ էր զբաղվում, որը՝ գյուղատնտեսությամբ»: Հետո ամեն ինչ փոխվեց. մարդիկ զրկվեցին իրենց ծննդավայրում ապրելու իրավունքից: Գյուղից հինգ ընտանիք այժմ Արցախում է, երեսուն ընտանիք էլ՝ Հայաստանի տարածքում՝ հիմնականում Արարատի մարզում:

Մեզ մասնավորապես հետաքրքրում էր Հին Թաղերի գյուղամիջի բազիլիկ եկեղեցին՝ Ս. Ամենափրկիչը, որը, ըստ Շահեն Մկրտչյանի, թվագրվում է ԺԶ դարով: Եկեղեցու պատին կից կան քանդակազարդ տապանաքարեր, խաչքարեր (*Շ. Մկրտչյան,* նշվ. աշխ., էջ 128):

«Խորհրդային տարիներին, երբ բոլոր եկեղեցիները պահեստ էին դարձրել, ամբարներ սարքել, ցորեն էին լցնում, ինչ-որ մեկը եկել է գյուղ, կոլխոզի նախագահին ասել, որ եկեղեցին մաքրել տա, թե չէ փորձանք կպատահի: Նախագահը չհասցրեց մաքրել եկեղեցին. իրեն հանեցին նախագահությունից, հետո էլ՝ 1991 թ., ինքն էլ, կինն էլ սպանվեցին: 2000 թ., երբ դարձա գյուղապետ, առաջին գործս այն էր, որ ներսում լցրած քարերը հանեցինք, մաքրեցինք եկեղեցին՝ բերելով նախկին տեսքին: Մեր գյուղացի բարերարների շնորհիվ ինչպես հարկն է վերանորոգել էինք»: Երբեմնի շեն համայնքի ղեկավարը հպարտությամբ է նշում. «Գիտե՞ս՝ քանի կնունք ենք արել այնտեղ. գյուղի մեծամասնության քավորը ես եմ»:

Լուսանկարը՝ Դավիթ Շադյանի

Արմատներով հինթաղերցի Դավիթ Շադյանը պատմում է. «Պատերազմից հետո պատահաբար իմացա, որ Հին Թաղերում կռված երկու տղաներ (Տիգրան Մխիթարյան, Բագրատ Նավասարդյան) Ս. Ամենափրկիչ եկեղեցու զանգերն ու խաչերը հասցրել են հանել»: Դրանք տարվել են Ագարակ (Մեղրի):

«Տիգրանը Մոսկվայում էր ապրում, պատերազմի հենց հաջորդ օրը գալիս է եւ միանգամից գնում կռիվ, հետո էլ մեկ տարի մնում բանակում: Բագրատը Քաշաթաղի շրջանի գյուղերից մեկի՝ Ալաշկերտի գյուղապետն է»:

Արցախի թեմի առաջնորդի թույլտվությամբ Հին Թաղերի Ս. Ամենափրկիչ եկեղեցու զանգերն ու խաչերը հետո տեղափոխվում են Արարատի մարզի Արարատ գյուղի Ս. Հակոբ եկեղեցի: Այսպիսով՝ 2021 թ. մայիսից մինչ օրս դրանք Արարատ գյուղի եկեղեցում են, մինչեւ որ վերատեղադրվեն:

Էդիկ Այվազյանը, որ սկզբում բարկացել էր եկեղեցու զանգերն ու խաչերը հանելու համար, այժմ շնորհակալ է, որ գյուղից ու եկեղեցուց գոնե մի մասնիկ կա եւ մխիթարություն է տեղահանված գյուղացիների համար:

Հարցին, թե ինչու հենց Արարատ գյուղի եկեղեցուն վստահվեցին Հին Թաղեր գյուղի Ս. Ամենափրկիչ եկեղեցու խաչերն ու զանգերը, պրն Այվազյանը պատասխանում է. «Քանի որ մեր բնակիչները հիմնականում Արարատի մարզում են, Արարատ գյուղն էլ սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդավայրն է, որոշեցինք թողնել Ս. Հակոբ եկեղեցում»:

Այսօր էլ հինթաղերցիները (եւ ոչ միայն) այցելում են Ս. Հակոբ եկեղեցի, կարոտով մոտենում զանգերին ու խաչերին՝ օրհնություն ստանալու, ծննդավայրի անփարատելի կարոտը փոքր-ինչ մեղմելու...

Ազգի զարգացման, հարատեւման գլխավոր պայմաններից են արմատների, մշակութային արժեքների ճանաչումն ու պահպանումը: Անտարբերությունն ամեն փոքր թվացող հարցում մի մեծ սեպ է մեր դարավոր պատմության մշակութային հսկա ժառանգության մեջ: Ներկա պայմաններում, երբ վտանգված է Արցախ աշխարհի ապագան, առավել կարեւոր է մեր մշակութային կոթողների ուսումնասիրությունը, ճանաչումը: Հազարավոր կյանքերի գնով մինչեւ վերջերս պաշտպանված բազմաթիվ տարածքներ այժմ Ադրբեջանի կազմում են, մեր պապերի թողած ժառանգության զգալի մասը՝ ոչնչացման եզրին:

Մակար եպս. Բարխուդարյանցի «Արցախ» աշխատության առաջաբանն այսօր էլ արդիական է. «Այնքան անհոգ ու անտարբեր ենք, որ չգիտենք, թէ ինչ հնութիւններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիքներից մեզ աւանդ մնացած. չգիտենք, թէ պատմական փշրանաց ինչ յիշատակարաններ կան թաքնուած մեզ շրջապատող լեռների, ձորերի եւ դաշտերի մէջ. չգիտենք, թէ ազգային անցեալ պատմութեան մութ կէտերը լուսաբանող ինչ արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ անապատների, մատուռների եւ եկեղեցիների, խաչարձանների եւ տապանաքարերի վերայ եւ մագաղաթեայ գրչագիրների յիշատակարաններում: Մեր անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարներն»:

Աստղիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Դավիթ Անհաղթի՝ Խաչին նվիրված ներբողը եւ դրա մեկնությունները

↩ *էջ 4*

Այնուամենայնիվ, նրա եւ Դավիթ Անհաղթի համանուն երկերում նկատեցինք բովանդակային եւ կառուցվածքային որոշ ընդհանրություններ: Ս. Գրիգոր Նարեկացու ներբողում նույնպես հստակ տարանջատվում են նկարագրական եւ գոհաբանական մասերը: Սակայն ի տարբերություն Դավիթ Անհաղթի, հետագայում նրանից ազդված Թեոդորոս Քռթենավորի եւ Զաքարիա Ձագեցու երկերի՝ Ս. Գրիգոր Նարեկացու ներբողի գոհաբանական հատվածի պարբերություններն սկսվում են ոչ թե միեւնույն բառով, այլ հայոց այբուբենի տառերով՝ «Աստուածային անբաւ.... Բարեբանեալ ես...., Գովեալ ես...., Դրուատեալ ես....» եւ այլն: Ս. Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ առկա են նորպլատոնական փիլիսոփայությանը եւ արեւելաքրիստոնեական միստիկային բնորոշ կարեւոր գաղափարներ ու արտահայտություններ:

Խաչին նվիրված չափաբերական ներբող է հեղինակել նաեւ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990—1058 թթ.): Այս երկի յուրաքանչյուր տողն սկսվում է «Աւրհնեա՛լ ես» արտահայտությամբ, ինչպես «Բարձրացուցէք»-ի գոհաբանական-բանաստեղծական հատվածը, եւ ավարտվում է *-եալ* հանգով: Ողջ ստեղծագործության մեջ զգացվում է «Բարձրացուցէք»-ի ազդեցությունը. հիմնականում համընկնում է պատկերների նկարագրության հերթականությունը, իսկ որոշ հատվածներ, կարծեք, ուղղակի Դավիթ Անհաղթի Ներբողի չափածո վերապատումը լինեն: Դավիթ Անհաղթի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկից օգտվել են նաեւ միջնադարյան շարականների, տաղերի ու գանձերի հեղինակները:

Անդրադառնալով շարականներին՝ Ն. Թահմիզյանը ենթադրում է, որ մինչեւ է դարը Եկեղեցու նավակատիքի եւ Խաչի վերացման միացյալ տոներին կատարվել են Հովհան Մանդակունու հորինած Տապանակի կանոնի երգերը: է դարից սկսած՝ Խաչին նվիրված երգերով հանդես են եկել մի շարք բանաստեղծ-երաժիշտներ՝ Աշոտ Պատրիկ Բագրատունին (է դ.), Ստեփանոս Ապարանեցին (Ժ դ.), Գրիգոր Մագիստրոսը (ԺԱ դ.), Ս. Ներսես Շնորհալին (ԺԲ դ.): Խաչին ու Եկեղեցուն նվիրված շարականների մեծ մասի հեղինակը Սահակ Գ Ձորոփորեցի կաթողիկոսն է (677—703 թթ.), որը եղել է Թեոդորոս Քռթենավորի աշակերտը:

Շարունակելի

Արմինե ՄԵԼՔՈՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Արփինե Ջանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 29.12.2022 թ.
Տպաքանակը՝ 1225